**Государственное учреждение**
**"Бюро по реализации**
**градостроительных программ"**
**Министерства градостроительства**
**Республики Армения**

State Agency "Urban Development
Projects Implementation Unit"
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

**Հայաստանի Հանրապետության**
**Քաղաքաշինության նախարարության**
**«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման**
**գրասենյակ» պետական հիմնարկ**

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Governtment House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

04.02.14 N հԱ1-64-14

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով շրջանակային
համաձայնագիր կնքած բոլոր Մասնակիցներին

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3»** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել **Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր** (այսուհետ՝ Ապրանք):

Գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով **մինչև 18-ը փետրվարի 2014 թվականի ժամը 10:00-ն:**

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, **18-ը փետրվարի 2014 թվականի ժամը 10:00-ին:**

Հայտը ներառում է.

1. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), և
2. Գնային առաջարկ (Հավելված N 2):

Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (հավելվածներ)՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**- «Պիտանելիության չափորոշիչ».**

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

**- «Ֆինանսական չափորոշիչ».**

գնային առաջարկ (Հավելված N 2), որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, յուրաքանչյուր չափաբաժնի մասով մեկ թվով՝ միավոր գնի ու քանակի արտադրյալի արդյունքում ստացված ընդհանուր գումարի չափով: **Կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:** Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ կողմից կազմակերպված գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ <<**ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-14/2**>>:

Կից ներկայացվում են հայտում ներառվող հավելվածները և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Հ. Սարգսյան

*Կատ.*
*Ա. Վարդանյան*
*հեռ. 010 564 316*